

Խ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԽՈՐՃՐԴՅԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

664.

ԵԼԵԿՏՐԻՔԻԿԱՅԻՆ

338.98(47.925)
2-87

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՆԿՈՆ - 1929

336.98(97-925)

2-87

2802-10

Խ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԽՈՐՃԱՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

1927/28—1932/33 թ. թ.

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ
ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱ



32 324

14 JUN 2013

Պետպլանի կողմից ժողովրդական տնտեսության պլանը կազմվում է վորոշ ժամանակաշրջանի համար—մեկ տարով («վերստուգիչ թվեր»), հինգ տարով (հնգամյա պլան), գերագույն (գեներալինայ) պլան։ Այդ պլանները սերտորեն կապված են մեկը մյուսի հետ, ինչպես, որինակ, «տարեկան վերստուգիչ թվերը» կազմում են հնգամյակի մի մասնիկը, հնգամյակը՝ գերագույնի և այլն։ Այստեղից հարց ե ծագում, թե ինչ ձևով պետք ե կազմվի ժողովրդական տնտեսության հնգամյա պլանը. չե՛ վոր ժողովրդական տնտեսության բոլոր բընագավառներն անխափի սերտ կերպով կապված են մեկը մյուսի հետ։ Ի՞նչ թելից պետք ե բռնել, վոր չխճանի։ Այդ թելը հանդիսանում է արդյունաբերությունը. Արդյունաբերությունը հանդիսանում է այն ողակը, վորն ուղղություն՝ և տոն ե տալիս արտադրության մնացած ճյուղերին։

Արդյունաբերությունը զարգանալով՝ իր մեջ և առնում, համախմբում ավելի շատ բանվորներ—սոցիալիզմ կառուցողներ։

Արդյունաբերությունը զարգանալով՝ արտադրության միջոցները կենտրոնացնում ե պետության ձեռքը։ Արդյունաբերությունը զարգանալով՝ կատարեկագործում ե, ավելի շատ ապրանք և արտադրում, ավելի եժան գներով։ Փոխանակության մեջ ե քաշում գյուղացիական մասան, վերջինս իրեն ղեկավարությանը լենթարկելով։



ԿՐԴ ՀՕԴ

Հրատ. № 1062

ՊԵՏՀՐԱՏԻ Խ ՏՄԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառեալ. № 2752 (բ.)	Պատով. № 1008
Տիրաժ 5000	

Ալսպիսով, բազմազան ճանապարհներով արտադրության բոլոր ճյուղերը արդյունաբերությունն ուղղում ե սոցիալիստական հունով։ Ահա թե ինչու հնդամբա պլանի հիմքը կազմում ե արդյունաբերությունը։ Դեռ 1923 թ. ապրիլին Համեր(բ)կ 12-րդ համագումարի բանաձեռնում—արդյունաբերությունը և նրա զերը սոցիալիստական շինարարության մեջ, մենք կարդում ենք հետեւյալը։

«Բանվոր դասակարգի և գյուղացիության փոխարարերությունը, ինչպիսին գոյություն ունի մեզ մոտ, վերջին հաշվով հինգում ե արդյունաբերության և գյուղատնտեսության վրա։

Բանվոր դասակարգն իր ղեկավարող զբար-թյունը կարող է, փերջին հաշվով՝ պահպանել և ամ-րացնել վոչ թե բանակով, պետական ապահա-րատի միջոցով, վորը վերարտադրում ե իրեն պրոլետարիատին։

Կուսակցության, պրոֆմիության, կոմյերիտ-միության, մեր դպրոցների և այլն խնդիրն ե դաստիարակել, վերապատրաստել բանվոր դա-սակարգի նոր սերունդ, այլ կերպ զուրս կզար, վոր այդ աշխատանքներն ավագի վրա լին կա-ռուցված, իեթե նա իր հիմքում չունենա աճող արդյունաբերական բազա։ Միայն արդյունաբե-րության աճումն ե ստեղծում պրոլետարական դիկտատորակի անսասան հիմքը» *):

Համեր(բ)կ 15-րդ համագումարի վորաշման

*) Տե՛ս Համեր(բ)կ դիրեկտիվները տնտ. քաղաք. ընա-գավառում 10 տ. ընթացքում (1917—1927) Մ. Սալահյով, հջ 18,

համապատասխան վորոշում ունի նաև Հայաստանի կոմկուսի համագումարը մեր յերկրի ինդուստրիաց-ման մասին, վորի հիման վրա կազմված և Հայաս-տանի արդյունաբերության հնդամյա հեռանկարային պլանը։

Վորհնօք են մեր արդյունաբերության զարգաց-ման կարևոր խնդիրները։

Ինդուստրիացման յենթարկել մեր լերկերը, ագ-րարակին-արդյունաբերականից դարձնելով արդյունա-բերական-ազգարարակին յերկիր։ Ուստի անհրաժեշտ ե զարգացնել լեռնալիքն և լեռնագործական արդյունա-բերությունը, եժան եկամուրի ֆիկացիալի բազաի հիման վրա զարգացնել քիմիական արդյունաբերությունը, զեֆիցիալի և տեղական շինանյութի արդյունաբե-րությունը, զարգացնել տեղական գյուղատնտեսական հում նյութ մշակող արդյունաբերության ճյուղերը, հաշվի առնելով ինչպես մեր յերկրի ինդուստրիաց-ման խնդիրները, այնպես իլ Խորհրդային Անդրկով-կասի և ԽՍՀՄ-ի պահանջները։

Վերոհիշյալ խնդիրներից յելնելով՝ այժմս համա-ռոտ կանգ. առնենք արդյունաբերության զվարար ճյուղերի զարգացման հեռանկարների վրա։

ԱԲՏԱԴԻՑԱՆ ՄԻՋԱՑՆԵՐԻ ԱԲՏԱԴԻՑՈՒԹՅՈՒՆ (ԽՈՐԻ «Ը»)

Արտադրության միջոցների արտադրություն կոչվում ե արդյունաբերության այն բնագավառը, վո-րը արտադրում ե մեքենաներ, քիմիական նյութեր, որինակ, գյուղատնտեսության պարարտացման հու-մար, մի խոսքով՝ բոլոր այն միջոցներն ու գործիք-

ները, առանց վորի հնարավոր չե արտադրության մնացած ճյուղերը զարգացնել, մեքենայացման լին-թարկել և այլն:

Արդյունաբերության այդ բնագավառն այլ խոսքով կոչվում ե ծանր արդյունաբերություն (ինդուստրիա):

Խորհրդավին Միության մեջ շատ քիչ են արտադրվում մեքենաներ թե մեր գործարանների համար և թե գյուղատնտեսության համար: Դրա համար ել մենք ստիպված ենք լինում զանազան տեսակների մեքենաներ բերել արտասահմանից, վորոնց արտադրությունը մեզ մոտ քիչ ե, կամ թե նոր ե սկսվում ու դեռ զարգացած չե:

Ուստի մեր Խորհրդավին Միության առաջ դրված ամենակարևոր խնդիրն ե՝ ինդուստրիացման լին-թարկել մեր սոցիալիստական հայրենիքը, զարկ տալ արտադրական միջոցների արտադրությանը, վորի հետևանքով մենք անկախություն ձեռք կբերենք կապիտալիստական յերկրների նկատմամբ:

Այդ ե պատճառը, վոր վողջ արդյունաբերության հիմնական ծախքի, այսինքն 85 միլ. ոուր. կեսից ավելին՝ 49 միլ. ո., կամ 57,6 տոկոսը գնում ե վերոհիշյալ բնագավառի զարգացման համար: Դա յե հանդիսանում ինդուստրիացման միակ և ուղիղ ճանապարհը, այս հարցի նկատմամբ պատճառ է արդյունաբերության մեջ առաջակայի առաջարկը բոլոր տատանումները շեղում կլինեն կոմկուսի հիմնական դիրեկտիվներից: Մեր պլանում վերոհիշյալ խնդիրներն իրենց արտացոլումն են ստացել վոչ թե մեքենայորեն, այլ միայն նրա հետեանքով, վոր մեզ մոտ լայն հնարավորություն կա-

զարգացնելու յերկրագործական, քիմիական և շինանյութի արդյունաբերությունը:

Անցնենք առանձին-առանձին ճյուղերի քննությանը ըստ հնգամյակի:

ՊՂՆՁԻ ԱՐԴՅՈՒԽՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերության այս ճյուղի զարգացման անհրաժեշտության մասին հարկ չկա խոսելու: Որպեսին աճում ե նրա նկատմամբ պահանջը: Մեր արդյունաբերությանը համապատասխան պղնձի պահանջը մեր առաջ հիմնական խնդիր ե դնում՝ լայնացնել և բարձրացնել պղնձի արդյունաբերության զարգացման տեմպը:

Պղնձի մինչպատհբազմյան միջին արտադրությունը Ալավերդու և Զանգեզուրի կոմբինատներում կազմում եր 4600 տոնն:

Դրա գիմաց 1927/28 թ. մենք արտադրում ենք 1972,3 տ. պղնձ, այսինքն նախապատերազմյան միջին նորմայի 43 տոկոսը:

Իսկ յեթե նկատի ունենաք, վոր 1913 թիվը պըզընձի արդյունաբերության ուկորզային տարին եր, և այդ թվին նրա արտադրությունը հասնում եր 5580,3 տ., պարզ ե, վոր այդ տոկոսն ավելի կիշնի:

1927/28 թ. պղնձի արդյունաբերության առանձին-առանձին կոմբինատներում մենք ունենք հետեւյալ պատկերը. Ալավերդում 1296,2 տ. կամ նախապատերազմյան միջինի 39 տոկ., Զանգեզուրի կոմբինատում՝ 676 տ. կամ նախապատերազմյան միջին նորմայի 53 տոկ.:

Հեռանկարային պլանը Հայպղնձի նկատմամբ

Նկատի լի ունենում մի շարք ձեռք առնվելիք միջոցներ, ըստ վորի 1931/32 թ. պետք և արտադրվի 4676 տոնն, ալմինքն այդ տարում վերջնականապես ափարտվում և վերականգնման շրջանը՝ 1932/33 թ. պղնձի արտադրությունը պետք և հասնի 8.120 տ., ալմինքն նախապատճերազմյան միջին նորմայի դիմաց 176,5 տոկոս:

Տոկոսավին հարաբերությունը պարզ ցույց է տալիս, վոր հնգամյա պլանի վերջում պղնձի արտադրությունը նախապատճերազմյանի հետ համեմատած 76,5 տոկոս ավելանում է:

Հիմնական ծախքը պղնձի արդյունաբերության մեջ Գլխազույնպղնձի կողմից ընդունված և 20790,3 հազ. ո., ծրագրում նախատես ված և իւրկու կոմբինատների (Ալսհիւդի, Զանզեղուր) լրացուցիչ վերանորոգում, ինչպես նաև հետպատճերազմյան բնահետազոտման և բնակչության աշխատանքների լայնացումն ու տարածումը:

Ծծմբաքար (սերնի կալչիդան) Տանձուտի և Սիսի-Մաղանի շահագործման հարցը մինչև հիմա չի մշակված և չունի իր հնգամյա պլանը: Սակայն մեր հնգամյա պլանի ամփոփման ժամանակ ԽՍՀՄ Պետպլանը և Ժողովնախորհն ուշադրություն են դարձրել այդ ճյուղի վրա, բայց, ինկատի ունենալով ծծմբաքարապի մեջ պարունակվող ծծմբի քանակությունը, նրա պաշարը, — անհրաժեշտ գտան հիմնական ներդրումների ծրագրի մեջ այդ նպատակի համար նախատեսել 2070 հ. ո. այն հաշվով, վոր 1929/30 թ. արդյունաբերության ակտ ճյուղը վարկավորվի, սկսվի նրա մշակման հարցի ընսությունը:

ՇԻՆԱՆՑՈՒԹԻՒ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Արթիկի տեւծ: Շինարարական նյութերի արդյունաբերության խնդիրը քննելիս ամենից առաջ անհրաժեշտ և քննության առնել արթիկի տուֆի հարցը: Արթիկի տուֆի մասին շատ և խոսվել ու գրվել, վոր դրա նշանակությունը կովկասի սահմաններից շատ այն կողմն և անցնում:

Ներկալում մեր հիմնական խնդիրներից մեկն և ամեն միջոց ձեռք առնել, եժանացնել շինարարությունը, ուստի Արթիկի տուֆի հարցն այդ ուղղությամբ ել պետք և քննության առնել:

Հնգամյա պլանի ոպտիմալ վարիանտի համաձայն շինանությը պետք և եժանացվի 41,3 տոկ., դրա համար ել անհրաժեշտ և կիրառել մի շարք միջոցներ, վորոնց թվում լրւծել Արթիկի տուֆի հարցը, վորն, անկասկած, մեծ դեր և խաղալու մեր շինարարության եժանացման գործում:

Այդ տուֆի հանձան և մշակման գործով զբաղվում և «Արթիկի տուֆի տրիստը», վորը համամիութենական նշանակություն ունի: Մինչև հիմա չեն վերջացել նրա հնգամյա պլանի մշակման աշխատանքները, վոր մշակում և ԽՍՀՄ Ժողովնախորհի Շինարարական կոմիտեն:

Նախնական տվյալների համաձայն տուֆի արտադրությունը 32/33 թ. պետք և կազմի 250 հազարից մինչև 350 հազ. տոնն, հիմնական ներդրման գումարը, առանց յերկաթուղագծի 8,590 հ. ո. և հասնում:

Եերեք-չորս ամսից հետո կավարավի վերջինիս հնգամյա պլանը կազմելու գործը, վորից հետո բոլոր

հարցերը և տեղեկություններն Արթիկի տուֆի պրոբ-
լեմի հետ կազմակողմանի կլուսաբանվեն:
Պեմզա: Չնայած պեմզայի հսկայական նշանա-
կությանը շինարարության համար, այնուամենայնիվ
նրա արտադրման գործը թերագնահատվէլ ե:

Պեմզայի արտադրությունը գտնվում է անմիտի-
թար վիճակում. պեմզայի խառն արտադրանքի ար-
ժեքը 1927/28 թ. անփոփոխ գներով կազմում եր
142,1 հ. ո., նրա զարգացման հեռանկարային պլանը
նախատեսում է մի շարք միջոցներ, վոր արմատա-
կան փոփոխություն են մտցնելու պեմզայի արտադրու-
թյան և մշակման գործի մեջ: Հնդամիա պլանում հիմ-
նական ներդրման գումարը կազմում է 1771,3 հ. ո.,
իսկ 32/33 թ. ամբողջ արտադրանքը, 1926/27 թ. ան-
փոփոխ արժեքը հաշվով, 3,016 հ. ո. է կազմում:

Ինչպիս հայտնի յէ, Միության մեջ շինանյութի
մի շարք տեսակները գեֆիցիտային են, վորոնք հան-
դիսանում են մեր շինարարության անհրաժեշտ մա-
տերիալները: Մեր յերկրում կիրառվող ինդուստրիաց-
ման գործը մեր առաջ ավելի մեծ չափով ե զնում շի-
նանյութի պահանջը:

Յեթե հիմա չսկսենք զարկ տալ տեղական շինա-
նյութի արտադրության գործին, այն ժամանակ մենք
ապագայում հսկայական դժվարություններ կուն-
նանք:

ՑԵՄԵՆՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Շինանյութի գեֆիցիտային տեսակներից մեկը
հանդիսանում է յեմենտը: Մի շարք տեղական հե-

տախուզական աշխատանքների արդյունքը պարզեց,
վոր Դավալու գյուղի (Յերևանի գավառ) և Հա-
մամլուի (Լոռի-Փամբակ) շրջանում ցեմենտի մեծ
բաղա կա: Հնդամիա պլանի վերջում ամբողջ Հայաս-
տանում ցեմենտի պահանջը հասնելու յե 200 հ. տա-
կառի: Այս հանգամանքը թելադրում է մեզ անպայ-
ման կառուցել յեմենտի գործարան 600 հ. տակառ
արտադրելու կարողությամբ:

Կառուցման աշխատանքներն սկսվելու յեն 1929
—30 թ., շահագործումը 1931/32 թ., հիմնական ներ-
դրման չափը վորոշված է 4.200 հ. ո.:

ԿՐԻ ՅԵՎ ԳԱՅՃԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Նույն նպատակով շինանյութի արտադրության
ծավալման համար ծրագրված է այս տարի Դավալը-
վում և Յերևանում կառուցել կրի և գաճի գործարան: Զնայած
վոր մենք ունենք հսկայական քանակու-
թյամբ կրի, բայց և այնպես նա մեզ մոտ Հայաստա-
նում հանդիսանում է գեֆիցիտային շինանյութ: Կրի
և գաճի մեքենայացման լենթակա գործարանի կա-
ռուցման խնդիրը միանդամայն հասունացած և տնտե-
սապես հիմնավորվելու խնդիր է: Նախապես վորշ-
ված է հիմնական ներդրման չափը 204 հ. ո.: Մա-
կայն նախագիծը կազմելուց հետո, յերբ կազմվում եր
նախահաշիվ, պարզվեց, վոր այդ գումարը պետք է
հասցնել մինչև 460 հ. ուրելու:

ՓԱՅՏԱՄՇԱԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Դեֆիցիտային շինանյութի մեջ պետք է մտցնել
նաև փայտանկութերը: Մեր առաջ դրված՝ շինանյութի

եժանացման խնդիրը կլուծվի տեղական նլութերի լայն ոգտագործման ճանապարհով: Մինչև հիմա մենք շինարարության փայտն ստանում ենք ԽՍՀՄ-ից, վորը թանգ և նստում, շնորհիվ փոխադրական ծախքերի և ալլի: Հայաստանում գոյություն ունի, բավականաշափ քանակով, աճարի ծառ. նա կարող է վորոշափով փոխարինել այն նյութերին, վորը մենք ստանում ենք ԽՍՀՄ-ից:

Մշակման լենթարկելով մեզ մոտ յեղած անտառները, նախ՝ ավելի եժան կնսուի մեզ վրա փայտը, կազմակերպ հաղորդակցությունն անտեղի ծանրաբեռնը վածությունից և, վերջապես, յերրորդ, ամենակարեռը՝ հնարավորություն կստեղծենք Խորհրդային Միությունից ավելի շատ փայտ արտահանելու: Ահա թե ինչու հնգամյա պլանը նախատեսել և կառուցել փայտամշակման ֆաբրիկա Յերևանում, փայտ-սղոցային գործարան Մերքարում (Դիլիջանի գավառ), Զանգեզորում, յերեք փայտ-սղոցային շարժականներ, փաներայի *) գործարան իջևանում, փայտի չոր թորման գործարան Մերքարի և իջևանի փայտ-սղոցային գործարաններին կից:

Հիմնական ներդրման ընդհանուր չափը կազմում է 3750 հ. ռ.:

Բոլոր այս ձեռնարկվելիք միջոցների հետեանքով փայտի արդյունաբերության ամբողջ արտադրանքը 1927/28 թ. 708 հ. ոռություն փոխարեն 32/33 թ. հասնելու լի 3332,4 հ. ոռություն:

*) Բարակ տախտակ մշակող, աթոռների և այնի համար:

ԳՐԱՆԻՑ, ՄԱՐՄԱՐԻՈՆ ԿՈՆԳԼՈՄԵՐԱԾ (ՇԵՂՋԱՔԱՐ),
ԲԱԶԱԼՏ (ՍԵՎԱԿԱԿՈՒԾԻ)

Յերկրաբանական հետախուզությունների արդյունքուները պարզեցին, վոր Հայաստանում մենք ունենք մեծաչափ քանակությամբ գրանիտ, մարմարին շեղաքար (կոնգլոմերատ), բազալտ. նրանց մշակելու և արտադրելու անհրաժեշտությունը վոչ մի կասկածանքի յենթակա լինել չի կարող. այդ հանդիսանում և միանգամայն հասունացած և տնտեսապես հիմնավորված, այնքան, վորքան վերև թված բոլոր տեսակների նկատմամբ հսկալուկան պահանջ կա: Ահա թե ինչու հեռանկարային պլանը նախատեսել և կառուցել գրանիտ-մարմարին մշակող ֆաբրիկա Լոռի-Փամբակում, մարմարին մշակող ֆաբրիկա Յերևանում, կոնգլոմերատի ֆաբրիկա Իջևանում և բազալտի հալման գործարան Քոլագերանում: Բոլոր գործարանների համար հիմնական ներդրման գումարը վորոշված է 1600 հ. ռ., գործարանների կառուցման աշխատանքները պետք ե վերջանան հնգամյա պլանի առաջին յերեք տարիների ընթացքում:

Այդ գործարանների ամբողջ արտադրանքը հընդամենակի վերջում կհասնի 1047 հ. ռ.:

Յեթե հաշվելու լինենք կառուցման գրասենյակների վարկավորումը ևս, այսինքն 800 հ. ռ., այն դեպքում հեռանկարային պլանի ժամանակաընթացքում հիմնական ներդրման ընդհանուր գումարը շինանյութերի գործում կդառնա 12438 հ. ռ.: ինչպես տեսնում ենք, բավական պատկառելի գումար ե, ուստի անհրաժեշտ և ձեռք տանել բոլոր միջոցները, վորպեսզի արդարացնի իր նպատակը:

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Խորհրդավին Միության քիմիական արդյունաբերությունը զարգացնելու համար դժվար լուծելու խընդիրն իր ամբողջ մեծությամբ կանգնած եւ և մեր առաջ: Մեզանում դոյություն ունի եժան ելեկտրոնիքակիա, վորը լայն հեռանկարներ եւ բացում քիմիական արդյունաբերություն ստեղծելու ու զարգացնելու համար:

ԿԱՐԲԻԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Խորհրդավին Միության պահանջը կարբիդի նըկատմամբ խոշոր եւ կարբիդը հանդիսանում ե գեֆիցիտային ապրանք: Հնդամյա ծրագիրը նախատեսել ե լայնացնել և լրացուցիչ վերակառուցման յենթարկել գոյություն ունեցող կարբիդի գործարնը, հիմնական ներդրման չափը վորոշված ե 290 հ. ո., վորի հետևանքով կարբիդի ամբողջ արտադրանքը 27/28 թվականի 591,1 հազար ո. փոխարեն 32/33 թ. կհասնի 1662,7 հազար ոռութի, վորը հնարավորություն կստեղծի Միության արդյունաբերությունը կարբիդով մատակարարել՝ միաժամանակ պակասեցնելով գեֆիցիտը:

ԾՄԲԱԹԹՎՈՒՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Ալլահվերդու գործարանի գաղերի նկատմամբ կատարած փորձերը հնարավորություն բացեցին նախածրագրելու Ալլահվերդում ծծմբաթթվուտի գործարան կառուցելու գործը 14.000 տ. կարողությամբ, Ալլահվերդու կոմքինատում:

Խորհրդավին Միության ծծմբաթթվալին պա-

հանջն այնքան մեծ ե, վոր այդ մասին յերկար կարիք չկա զրելու: Մենակ Ազնեփտի պահանջը 32/33 թ.հավասար ե լինելու 60 հ. ու: Հիմնական ներդրման չափը ընդունված ե 1270 հ. ո., գործարանի կառուցումը պետք ե ավարտվի 31/32 թ., ամբողջ արտադրանքն այդ գործարանում հնդամյակի վերջում հավասար ե լինելու 345 հ. ո.:

ԱԶՈՏԱՑԻՆ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Հնդամյա պլանի համաձայն բերքատվությունը պետք ե բարձրացվի 30—35 տոկոսով. այդ խնդրի լուծումը մեծ չափով հենվում ե նաև գեֆիցիտային պարարտացման նյութերի վրա: Ահա թե ինչու Միութենական կառավարությունը վորոշել ե այս հնդամյակի ընթացքում արագացնել պարարտացման նյութեր արագելու գործարանների կառուցումը:

Չորագեսի հիդրօկալիանի եժան եներգիան լայն հնարավորություն ե բացում այդպիսի գործարան կառուցելու հարագիլիսայում:

Այդ գործարանն առաջին ժամանակաշրջանում արտադրելու յե 10 հ. ո., տարեցտարի արտադրությունն աճելով հասնելու յե 20 հ. տոննի:

Գործարանի կառուցման աշխատանքները պետք ե վերջանան Չորագեսի կառուցման ավարտման հետ միասին, այսինքն 31/32 թ.: Հիմնական ծախսման չափամիան, այսինքն 31/32 թ.: Հիմնական ծախսման չափը վորոշված ե 2.400 հ. ո. (նախագիծը կազմելու ժամանակ պարզվեց, վոր անհրաժեշտ ե բարձրացնել գործարանի արժեքը): Այդ գործարանի ամբողջ արտադրանքը հնդամյակի վերջում լինելու յե 1954 հ. ուրեմնի:

ՊՂՆՉԱՐՉՈՎԱԳԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Գյուղատնտեսությունը բարձրացնելու, ինտենսիվիկացիալի լենթարկելու համար մեր հրամաւողական խնդիրներից մեկն և անխնա պալքար մզել գյուղատնտեսության վնասատուների դեմ:

Ազգեգործության, գաղտագործության և առնել վնասատուների դեմ պայքարելու համար մեծ դեր ե խաղում պղնձարշասպը, վորը հանդիսանում է դեֆերիտային ապրանք:

Ալլահվերդու կոմբինատում ծծմբաթթվուտալին գործարան կառուցելու հարցի հետ քննվիլ և նախատեսվել ե նաև պղնձարշասպի գործարանի կառուցումը 2500 տ. արտադրելու կարողությամբ, հիմնական ծախսման գումարը 600 հազ. ռ.: Գործարանը շահագործման պետք ե անցնի 31/32 թ.: Ալլ գործարանի արտադրանքի ամբողջ արժեքը հնգամյակի վերջում հավասար ե լինելու 755 հազ. ռ.:

Այս բոլորից պարզվեց, վոր հնգամյա հեռանկարակին պլանի ընթացքում մենք կառուցելու յենք Յքիմիական գործարան, միաժամանակ պետք ե փերակառուցենք կարբիդի արդյունաբերությունը: Քիմիական արտադրության համար հիմնական ծախսը հավասար ե լինելու 4500 հազ. ռ., իսկ ամբողջ արտադրանը 1927/28 թ. յեղած 591,1 հազ. ռ. վորաբեն 32/23 թ. հնգամյակի վերջը կհասնի 5407 հազ. ռ.: Այս թվերը պարզ ասում են, վոր Խ. Միության քիմիացման խնդիրն իր անհրաժեշտ արտացոլումն և սուացել մեր արդյունաբերության հնգամյա հեռանկարային պլանում:

ՄԵՔԵՆԱՑԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Յերենանի մեքենայական գործարանի կառուցման աշխատանքներն ավարտելու համար նախատեսված է 451,5 հազ. ռ. ամբողջ արտադրանը 220,6 հազ. ռ., վորն ստացվում է 27/28 թ.: Հնգամյակի վերջում, այսինքն 32/33 թ. բարձրանալու իւ մինչև 549,7 հ. ռ.: Ահա ընդհանուր տոմամբ ծանր արդյունաբերության բոլոր այն ճյուղերը, վորոնցից մասամբ ունենք ներկայումս և ունենալու յենք ընթացիկ հնգամյակի վերջում:

Այնուամենանիվ, յերբ մենք ունենք խոշոր հսարակություններ նոր արդյունաբերական ճյուղեր զարգացնելու համար, մեր առաջ հարց ե ծառանում գիտական ուսումնասիրության աշխատանքների և լեռնա-յերկրաբանական հետախուզությունների միջուկով ուսումնասիրել նոր արդյունաբերության ճյուղեր:

Բացի այն միջոցներից, վորոնք նախատեսված են չափողնձի կողմից յերկրաբանական-հետախուզական աշխատանքների համար, մեր հնգամյա պլանը հետախուզական աշխատանքների համար բաց ե թօղնելու 3660 հազ. ռ. և քիմիական արդյունաբերության զծով կատարվելիք գիտական ուսումնասիրության աշխատանքների համար՝ 355 հազ. ռ.: Այս հինգ ասրիվանթացքում մենք աշնախի բարձրության վրա պետք կանք հետախուզումների և ուսումնասիրությունների աշխատանքները, վորպեսզի վերջնականացնեն յերեան հանենք արդյունաբերության նոր որեւկտներ, յերեան հանենք արդյունաբերության համար առաջարկեալից հիմնանկարագիշտ չափով անտեսական առաջարկեալից հիմնանկարագիշտ չափով, վորպեսզի հետազոտման վորենք այն նպատակով, վորպեսզի հետազոտման վորենք ապահովիչ թվերը կազմենալու ժամանակ հնգամյա պլանը և ստուգիչ թվերը կազմենալու ժամանակ ունենանք պատրաստի համարականախաներ:



ՊԱԼԻՄԾՈՆ ՄԻՋԱՑՆԵՐԻ ԱՐՏԵԳՐՈՒԹՅՈՒՆ
(ԽՈԽԾԲ «Բ»)

Յերբ մենք խոսեցինք արտադրական միջոցների արտադրության, ծանր ինդուստրիայի զարգացման մասին, այդ բոլորովին ել չի նշանակում, վոր պակաս կարևորություն ունի թեթև ինդուստրիան կամ, ավելի պարզ ասած, սպառման միջոցների արտադրությունը: Գոյություն ունեցող այդպիսի գնահատականները պետք ե արմատից վոչչացնել:

Թեթև ինդուստրիան հսկայական դեր է կատարում՝ յերկրի ժողովրդական տնտեսության զարգացման, մասնավորապես գյուղի ու քաղաքի կապի ամրացման համար:

Միաժամանակ թեթև ինդուստրիան հանդիսանում է կարևոր լծակը արտադրության միջոցների վերաբաշխման ու ծանր ինդուստրիայի վարկավորման համար: Թեթև արդյունաբերության առանձին ճյուղերը զարգացնելու համար մենք ունենք խոշոր հեռանկարներ: Ինչպես սկզբում ասացինք, Խորհրդային Միության առաջ դրված հիմնական խնդիրներից մեկն ել այն ե, վոր արտադրական ձեռնարկները մոտենան հում նյութին, և այդ ձեռնարկությունների արտադրանքը մոտենա սպառողին: Այս շատ կարևոր խնդիր ե, սա յե արդյունաբերության կազմակերպման սոցիալիստական պրինցիպը:

Ինչպես կտեսնենք, այդ պրինցիպը մեր հնգամյա պլանում ստացել ե իր լիակատար արտացոլումը:

ՄԱՆՎԱԾՔԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր տեղը թեթև արդյունաբերության մեջ ըռում և մանվածքագործայինը, վորի վրա մեծ ուշադրություն ե գարձվում: Գյուղատնտեսության զարգացման հնգամյա հեռանկարային պլանի՝ բամբակին վերաբերող մասում նախատեսված և բամբակի ցանքսաղացաը 1927/28 թվից մինչև 32/33 թիվը 14 հազ. հեկտ. հասցնել 34,9 հ. հեկտարի: Իսկ բերքը, վոր 1927/28 թվի մեկ հեկտարին տալիս եր 7,9 ցենտ*), պետք ե բարձրացվի 10,4 ց. (1931/32 թ.): Այս հանգամանքը լայն հանրավորություն և բացում զարգացնելու մանվածքագործային արդյունաբերությունը մեջանում:

Հեռանկարային պլանը նախատեսել ե լայնացնել մանվածքային մասը, հնգամյակի վերջում հասցնելով 100 հազ. հեկտի, գործվածքայինը 2500 դազգահ, միաժամանակ կառուցել արիկոտամի ֆաբրիկա: Մանվածքագործային արդյունաբերության զարգյացման այդ տեմպի համար 32/33 թվի բամբակի պահանջը կազմվել 6129 տոնն,**) իսկ բամբակի ցանքսաղացանի լայնացման և բերքի բարձրացման հետեւանքով մենք կունենանք հնգամյա պլանի վերջում, ապրանքային հավաքությի ժամանակ, բամբակի թել 11,618,34 տոնն: Յեթև այս տարի Խորհրդային Միության արդյունաբերության կարիքների համար մեր արտադրանքներից ուղարկում ենինք մեր թելի ընդհանուր քանակի 42,6 տոկոսը, ապա հնգամյա պլանի վերջում (32/33

*) Մեկ ցենտը հավասար ե 6 գրեմ:

**) Տաննը հավասար ե 60 գրեմ:

թվին) Խորհրդավին Միություն կարտահանենք 44,3
տոկոս:

Մանվածքալին արդյունաբերության մեջ հնգամյակի ընթացքում հիմնական ներդրման գումարը կազմում է 20 միլ. ռուբլի:

Ցերե 1927/28 թվերին մանվածքալին արդյունաբերության ամբողջ արտադրանքը կազմում էր 2.300 հազ. ռ., ապա այդ նույն ամբողջ արտադրանքը 32/33 թվին կհասնի 48800 հազ. ռ.:

Այս թվերը լերկար բացառության կարիք չեն գգում. նրանք ապացուցում են այն խոշոր նվաճումները, վոր մենք ունենք տեղական գյուղատնտեսական հում նյութի արդյունաբերությունը զարգացնելու ասպարիզում:

Մանվածքալին կոմբինատին կից գոյությունուն ունեցող կարի ֆաբրիկան յենթարկելու յե վերակառուցման (ռեկոնստրուկցիալի), այդ նպատակի համար բաց ե թողնվելու 250 հազ. ռուբլի:

ՇԱԲԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Խորհրդավին Միության շաքարի պահանջը, ինչպես ներքին սպառման շուկայի, այնպես ել արտահանման համար, հայական չափերի լե հասնում:

Մենք լենինականի դաշտում փորձեր կատարեցինք. ցանեցինք շաքարի ճակնդեղ. այդ փոքը բարեհաջող արդյունք տվեց ինչպես շաքար պարունակելու վորակով, այնպես ել բերքով: Լաբորատորական քննություններն ապացուցեցին, վոր ճակնդեղն իր մեջ պարունակում է շաքարանյութ 16—23 տոկոս, իսկ փորձնական ցանքով մեկ հեկտարից 700—1580 փութ բերք ավեց:

Բոլոր այս հանգամանքները հնարավորություն տվեցին ծրագրելու լենինականում շաքարի գործարան կառուցելու գործը, վորը 500—600 հ. փութ շաքարավակ պետք ե արտադրի, Շաքարի գործարանի կառուցման աշխատանքների և նրան կից ճակնդեղի խոշոր խորհրդավին առնենությունն կազմակերպելու համար նախատեսված և 5860 հազ. ռուբլի:

Գործարանի կառուցման աշխատանքները պետք ե սկսվեն 31—32, 32—33 թ. թ. այն հաշվով, վոր նաև սկսի գործել հետեւյալ հնգամյակի առաջին տարում:

ԿՈՆՍԵՐՎԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Մեր առաջ իր ամբողջ ծավալով կանգնած ե յերկրորդական արտահանության լախացման խնդիրը: Մենք ունենք վորակյալ մրգերի արգիներ մի կողմից, մյուս կողմից կոնսերվի արտահանման գործը դրական արդյունքներ ե տվել: Հնգամյակի ընթացքում կառուցելու լենք կոնսերվի լերկու գործարան՝ Յերեվանում և Աշտարակում:

Գործարանների կառուցման համար տրամադրված և 1150 հազ. ռուբլի: Յերևանի գործարանի կառուցման աշխատանքներն արդեն այս տարի կավարտվեն: Աշտարակում կառուցվի 32/33 թվականներին: Միայն Յերևանի գործարանի ամբողջ արտադրանքը հավասար ե լինելու 1255 հազ. ռուբլու:

ՈՍԼԱ-ԾՈՐԱՅԻՆ (կրամալո-պատօնայ) ԳՈՐԾԱՐԱՆ

Նորհայակետում յեղած հուս նյութի բազան (կարառֆիլ) հնարավորություն ե տալիս նախադեկու ուլածորային գործարանի կառուցումը:

Գործարանը կտուցվելու յե 1929/30, 30/31թ.թ., դրա համար պահանջվում է 260 հազ. ոռոք. ծախք: Հնգամյակի վերջում ամբողջ արտադրանքը կազմելու յե 329 հազ. ոռոքի:

ԳԻՒԻ-ՍՊԻՐՏ-ԿՈՆՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Գոյություն ունեցող գինու, սպիրտի և կոնյակի արդյունաբերությունը հնգամյակի ընթացքում վերակառուցման և յենթարկվելու և լայնացվելու յե այդ ճյուղի արտադրությունը:

Բացի այդ հնգամյա պլանը նախատեսել և վերոհիշյալ արդյունաբերությանը տալ նաև անալիկանոլ խմիչքներ արտադրելու վորոշ թեքում: Վերակառուցման համար հիմնական ծախսումների ծավալը գորշված է 1213,7 հազ. ռ.: Այդ գեղքում ամբողջ արտադրանքը 1927/28 թ. լիղած 2636,8 հազ. ռ. փոխարեն հասնում է մինչև 5611,9 հազ. ոռոքի:

ԿԱՇԵԳՈՐԾՄԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Տեղական հում նյութ արտադրող արդյունաբերության մասին խոսելիս անհրաժեշտ է նաև մատնանիշել կաշեգործարանի վերակառուցման և արտադրությունը լայնացնելու խնդիրը: Չնայած վոր Անդըրկովկասայան և Միութենական պետպլանները և ժողոտգերխորհն ընդունել են չայսատանում նոր կաշեգործարան կառուցելու հարցը, այնուամենայնիվ, նկատի ունենալով, վոր հում նյութի հարցը զեռ բազմակողմանի ուսումնասիրված չե և, բացի այդ, գոյություն ունեցող գործարանը գեռ լրիվ չափով ծանրա-

բեռնված չե, այդ պատճառով մենք անհրաժեշտ ենք գտնում հնգամյակի ընթացքում գոյություն ունեցող գործարանը ոեկոնստրուկցիալի յենթարկել, վորի համար նախատեսված է ծախսել 1075 հազ. ռ., վերջինիս ոեկոնստրուկցիայի հետևանքով նրա ամբողջ արտադրանքը 1927/28 թվականի 1264,1 հազ. ռ. դիմաց բարձրանում է մինչև 3891,0 հազ. ռ. (1932/33 թ.): Այսպիսով մենք վերջացրինք տեղական հում նյութ մշակող արդյունաբերության բոլոր բնագավառների հեռանկարային զարգացման խնդիրը: Յեթե այս բոլորը մի հայտարարի բերելու լինենք, մենք կունենանք հետևյալ պատկերը: Հինգ տարվա հիմնական ծախսի ծավալը կազմում է 29582,3 հազ. ռ., վորին զուգընթաց արդյունաբերության հիշատակած հյուղերի ամթաց արդյունաբերության համար 5,136 հազ. ռ. փոխարեն, վորը բողջ արտադրանքը 5,136 հազ. ռ. հասնելու յե հնգամյակի վերջում 57630 հազ. ռ.:

Թվերը ցույց են տալիս, թե ինչ չափի յե հասնում մեր թեթև ինդուստրիայի զարգացման տեմպը: Ավելին պարզաբանելու կարիք չկա:

ՊՈԼԻԳՐԱՖԻ (ՑՊԱԳՐԱԿԱՆ) ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Նպատակ ունենալով պոլիգրաֆ արդյունաբերությունն իմի հավաքել և կենտրոնացնել Հայուղիգրաֆում, հնգամյա պլանը Յերեանում կառուցվող նուշորտպարանի շենքի կառուցման աշխատանքների ավարտման համար նախատեսել է 768 հազ. ռ.:

Հայպոլիգրաֆի ամբողջ արտադրանքը 27/28 թ. յեղած 281,18 հազ. ռ. փոխարեն բարձրանալու յե մինչև 578,5 հազ. ոռոքի:

ՏԵՂԱԿ ԱՐԴՅՈՒՆՎԵՐՈՒԹՅՈՒՆ

Ծին ժառանգությունը, վոր սահցել են մեզ զավ-
գործկոթները տեղական արդյունաբերության բնագա-
վառում, զերոյի ին հավասար, բացառությամբ Ցեղեանի
և Լենինականի գործկոթների, վորոնց ունեն սաղմա-
յին վիճակում հատ ու կտոր անպետք «ձեռնարկու-
թյուններ», մնացած գործկոթները վոչինչ չունեն, կտմ
գրեթե կոչինչ չունեն:

Մեր տեղական բյուջեների վիճակն այսպես է, վոր նրանք գեռ մի շաբթ տարիներ դեֆիցիտային կլինեն: Տեղական բյուջեների դեֆիցիտային դրությունը լիկվիդացիայի լինթարկելու համար հիմնական միջացներից մեկը պետք է հանդիսանաայդ նույն տեղական արդյունաբերության ամրացման ու ծագման խնդիրը: Սակայն պետք է մատնանշել վոր խորհրդապետին կառավարության գոյություն ունեցող դեկրետը հանձնարարում է այդ տիպի արդյունաբերությունը ֆինանսավորել տեղական բյուջելի միջոցներից: Պարզ է, վոր տեղական դեֆիցիտային բյուջեները հնարավորություն չեն կարող տալ տեղական արդյունաբերությունը զարգացնելու, վորովհետև իվիճակի չեն լինի խոշոր գումարներ բաց թողնել այդ նպատակի համար: Բավական ե միայն նշել այն փաստը, վոր բոլոր տեղական բյուջեների կողմից 28/29 թ. տեղական արդյունաբերությանը բաց և թողնված միմիքան 160 հազ. ռ.: Վերստուգիչ թվերը կազմելու ժամանակ տեղական արդյունաբերության զարգացման հետանկարն անհրաժեշտ արտացոլում ընդունված է պաշտոնական տնտեսության պլանի մեջ:

Խնն դավառներից ժողովը դական տնտեսության
պլանում միայն լերեք դավառին և տեղ տրված՝ Յե-
րկանի, Լենինականի և Զանգեզուրի, իսկ դրանք եւ
բավարար չափով չեն քննված։

Հիմնական խնդիրն այս ընագավառի արդյունաբերության զարգացման համար հանդիսանում է տեղական շինանյութի արտադրության դործը՝ գաճ, քար, ավտզ, կղմինտը, աղցուս, տոմետ։ Այդ լեռեք գտվառի համար հիմնական ծախսի ընդհանուր ծավալը կազմում է 1700 հազ. ոուրլի:

Գետպլանի և ժողովնատգերխորհի վրա յեւ ընկնում
մոտ ապագայում զբաղվելու տեղական արդյունաբե-
րության հեռանկարային զարգացման հարցի վերջնա-
կան քննության գործով:

ՏԵՐԵՆԸՆԳՐԻՑԱԿՆ ԱՐԴՅՈՒՆԱԲՐԵՐՈՒԹՅԱՆ

Զնայած վոր մենք ապրում ենք կապիտալիստական յերկրների կողմից շրջապատված պայմաններում, այնուամենայնիվ մեր արդյունաբերությունը տարեցտարի հսկայական քայլերով առաջ ե գնում, և մենք ունենք զարգացման տեմպի այնպիսի աճում, վորը չունի և վոչ մի խոշոր կապիտալիստական լերկիր։ Սակայն դեռ ելի մենք ապրանքների պակաս ենք զգում թե արտադրական միջոցների և թե սպառողական միջոցների։

Այս դժվարությունները պայմանավորվում են մեր սոցիալիստական շինարարության ընդհանուր դժվարություններով։ Ուստի կարենոր նշանակություն է ստանում խոչըն արգլունաբերությանը զուգընթաց կարենոր ուշադրություն դարձնել տնտեսական առաջնային գործություններում։

նագործական արդյունաբերությանը։ Արհեստավորա-
րա-տնայնագործական արդյունաբերության տեսա-
կարար կզիռը, վողջ արդյունաբերության ընդհա-
նուր արտադրանքի մեջ, 1927/28 թ. 41,1 տոկոս և
կազմում, իսկ ցենզայինը՝ 58,9 տոկ.։ Այս թվերը ցուց
են տալիս, վոր մանր և արհեստավորական-տնայնա-
գործական արդյունաբերությունը խոշոր դեր է իս-
տում մեր արդյունաբերության ընդհանուր արտա-
դրանքի մեջ։

Արդյունաբերության այդ բնագավառի զարգաց-
ման հեռանկարալին հնագամյա պլանի համաձայն ամ-
բողջ արտադրանքը պետք է աճի 101,2 տոկոսով, այս-
ինքն 15,7 միլ. ոուրլուց պետք է հասնի 31,6 միլ.
ոուր.։ Հիշտակված աճումը պետք է կատարվի գրեթե
բացառապես համայնացված սեկտորի հաշվին։

Այդպես, ուրեմն, յեթե 27/28 թվ. 15,7 միլ. ո.
գումարից համայնացված սեկտորի բաժինը կազ-
մում եր ընդամենը 3,6 միլ. ո., կամ թե չե 22,9
տոկ., դրան միանգամայն հակառակ 32/33 թ. 31,6
միլ. ո. գումարից համայնացված սեկտորի բաժինը
կկազմի 18,9 միլ. ոուր., տոկոսային հարաբերությամբ
59,8 տոկ., համայնացված սեկտորը զարգանում է գըլ-
խավորապես տնայնագործական արտադրական կոո-
պերացիալի գծով։ Այս բնագավառում հիմնական
նպատակը պետք է համարել այն ճյուղերի զարգաց-
ման արագացումը, վորոնք ծառայում են մեր արտա-
հանման գործին (գորգագործության, վոսկերչության
և այլն), ինչպես նաև այն ճյուղերի, վորոնք աշխա-
տում են տեղական հում նյութով։

Գորգագործության ամբողջ արտադրանքը 27/28

թվին կազմում եր 46 հազար ոուր., իսկ 32/33 թ.
կազմելու յե 1500 հ. ոուր.։

Վոսկերչությունը 27/28 թվին կազմում եր 45,6
հազ. ո., իսկ 32/33 թ. աճելու յե մինչև 336 հ. ո.։
Արդյունաբերական այն բնագավառներից, վորոնք
աշխատում են տեղական հում նյութով, անհրաժեշտ
ե թվել բամբակագործական, բրդագործական, բըր-
դի և բամբակի մշակութը։ Ամբողջ արտադրանքը
27/28 թ. կազմում եր 2308,1 հ. ոուր., իսկ 32/33 թ.
կլինի 14 900 հ. ոուրի այդ թվում տեղական հում
նյութը՝ 9804,7 հ. ոուր.։ Հնագամյակի ընթացքում հիմ-
նական ծախսման ծավալը 1155,8 հազ. ոուր. է կազ-
մում, այդ թվից տեղական հում նյութով աշխատող
ճյուղերին հասնում է 967,5 հազ. ոուր., վորից գոր-
գագործության բաժին է ընկնում 387 հազ. ոուրի։

Ահա ընդհանուր ասմամբ այն ճանապարհը, վո-
րով զարգանում է մեր տնայնագործական արդյունա-
բերությունը։

ԵԼՍԿԾԲԻՖԻԿԱՑԻՈՆ

Խորհրդային Միության ինդուստրիացումը, գյու-
ղատնտեսության զարգացումը և ինտենսիվիկացիան,
հազորդակցության ելեկտրիֆիկացիան, այս բոլորը
որի վրա բարձրացնում են իրենց պահանջը ելեկ-
տրոնիկալիզացիան և վառելիքի նկատմամբ։

Չնայած վոր վառելանյութի արտադրությունը
(քարածուխ, նավթ, տոլիֆ այլն) հսկա քայլերով և
զարգանում է նախապատերազմյան սահմանը վաղուց
ե իր յետեր թողել, այնուամենակիվ վառելա-
նյութը հանդիսանում է մեր ժողովրդական տնտե-
սության դժվար խնդիրներից մեկը։

Մեր ժողովրդական տնտեսությունը պահանջում է վասելանյութի եկոնոմիայի առավելագույն զարգացում, Ընկ. Կրժիքանովսկին Համկ(ր)կ Կենտկոմի նույնբերյան պլենումում հայտարարել ե հետևյալը.

«Ելեկտրիֆիկացիայի զարգացումը՝ մեր հիմնական հույսն ե վառելանյութի եկոնոմիայի խնդրում»:

Իսկ զոր այդ այդպիս ե, ցուց են տալիս թվերը, թե ինչ հսկայական նշանակություն ե ունեցել ելեկտրիֆիկացիան վառելանյութի խնայողության դրոծում:

Վոլխովստրոյը գործի գցելուց հետո Դոնեցի բասսեյնում մենք ունենք վառելանյութի խնայողություն՝ լուրաքանչյուր տարի մեկ և կես միլ. տ.: Բոլոր այս հանդամանքները թելադրում են մեզ, վոր մենք մեր ելեկտրաշինարարությունը վոչ մի դեպքում չպետք ե նեղացնենք, այլ ընդհակառակը, պետք ե լայնացնենք, ծովալենք: Մեզ քաջ հայտնի լե, վոր 9-րդ կուսամագումարի բանաձեկի հետեւնքով, 1920 թվին կազմվեց մեր վողջ ժողովրդական տնտեսության պերագույն պլանը, վորը հայտնի լե ելեկտրիֆիկացիայի պլան (ГОЭЛРО) անվամբ: Հայտնի լե նույնպես, վոր այդ պլանը կազմվել ե ընկեր Լենինի անմիջական ղեկավարությամբ: Ընկ. Կրժիքանովսկին Համկ(ր)կ 15-րդ համագումարում հայտարարեց, վոր Վլադիմիր Խլյաչն ելեկտրիֆիկացիայի պլանը համարում եր կուսակցության յերկրորդ ծրագրի սկիզբ: Ել Գոներո-ի պլանի համաձայն 10—15 տ. տ. ընթացքում մենք պետք ե կառուցենք 30 շրջանային կայան մեկ և կես միլ. կիլովատտ ունակությամբ:

Բոլոր տվյալները ցույց են տալիս, վոր մինիմալ ժամանակաընթացքում—(10 տարի), այսինքն

1931 թվականին ծրագիրն իրագործված կլինի ավելցուկով:

Բոլոր այն արդյունաբերական ճյուղերը, վորոնց մասին խոսեցինք վերեւում, հսկայական պահանջ են ներկայացնում ելեկտրիֆիկացիային: Մեր յերկրը, շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, շատ հարուստ է հիգրոներգիայով: Այս հանգամանքն աշխատանքի լայն դաշտ ե բացում մեր առաջ՝ զարգացնելու հիդրոներգիային շինարարությունը համեմատարար ավելի շահը ինքնարժեքով, վորը հնարավորություն ե տալիս զարգացնելու արդյունաբերության մի շարք ճյուղեր, միաժամանակ ելեկտրիֆիկացիայի էնթարկել հաղորդակցությունը. մասնավորապես մեծ չափով ոժանդակում է քիմիական արդյունաբերության զարգացմանը: Հայսատանի խորհրդայնացման առաջին որը 1921 թ. մեջանում գոյություն ուներ (Փարբիկա-գործարանային և կոմմունալ) ընդամենը լոթ կայան, 2639 կիլ.: Բոլոր առևակի սպառողների պահանջը կազմում եր 3,9 միլ. կիլ.-ժամ:

Մի շարք միջոցների հետևանքով արդյունաբերության վերակառուցման և հիմնադրման և ժողովրդական տնտեսության ուրիշ ճյուղերի զարգացման համար անցյալ 1927/28 թ. ելեկտրոնեներգիայի պահանջը կազմում եր 14,9 կիլ.-ժ., վորից արդյունաբերությունն սպառում եր 12,4 կիլ.-ժ., կոմմունալ ու կենցաղային կարիքներին՝ 2,0 միլ. կ.-ժ., իսկ գյուղատնտեսություն՝ 0,5 միլ. կ.-ժ.: Այդ պահանջը ծածկելու համար անհրաժեշտ եր վերանորոգել յեղած կոմմունալ և Փարբիկա-գործ. կայանները, դրա հետ միասին կառուցել նորերը: Անցյալ տարի մենք ավարտեցինք կե-

Նինականի հիգրոկայանը, իսկ ավելի առաջ՝ Յերևանի հիգրոկայանը: Բացի դրանից կառուցել ենք և վերանորոգել մի շարք մտնր կայաններ, ինչպես, որինակ, Նոր-Բայազետում, Ղարաքիլիսայում, Սահմանավահում և Դիլիջանում: Հիմնական ներդրման չափը կտղմում եր 4 միլ. ոռոբ., վորի հետևանքով 1927—28 թ. բոլոր կայանների մեծությունը հասնում եր 3186 հ. կիլ., զրանց զուգընթաց սկսվել էյին կառուցման աշխատանքները Զորագետի շրջանալին՝ կայարանի՝ 20 հազար կիլովատտ կարողությամբ ուրիշ յնքեք կայարաններ՝ գլուղատնտ. և կոմմունալ նշանակություն ունեցող — իջևանում, Գորիսում և Դիլիջանում:

Առանձին արդյունաբերական ճյուղերի զարգացման համար հնգամյակի վերջում ժողովրդական տըստեսության ելեկտրո-եներգիայի ընդհանուր պահանջը կկազմի կլորացրած 100 միլ. կիլ.-ժ., այսինքն 1927/28 թվի նկատմամբ ավելանում ե 6 և կես անգամ (թը-վերով՝ 100 միլ. կիլ.-ժ.) հանդիսանում են փոքրացրած և յենթակա յեն պարզման, տվելացնելու ուղղությամբ), ըստ գորում արդյունաբերության պահանջը կկազմի 87 միլ. կիլ.-ժ., կոմմունալ և կենցաղի կարիքներին՝ 7 միլ կիլ.-ժ., և գլուղատնտեսության՝ 6 միլ. կիլ.-ժ.: Այս թվերը ցուց են տալիս, վոր հսկայական չափով ավելանում ե ելեկտրո-եներգիայի պահանջը:

Փողովրդական տնտեսության բոլոր բնագավառների պահանջն համապատասխանող այնպիսի պլան պետք եր կազմել, վոր նա բավարարեր բոլոր ճյուղերի կարիքը: Դրա համար ել ելեկտրիֆիկացիայի հնգամյա հեռանկարանային պլանը նախատեսում է Զորագետի շրջանային կայանի կառուցման ավարտումը

20 հազ. կիլ. եներգիայով, այն հաշվով, վոր նա սկսի գործել 31/32 թ. սկզբին. նրա վրա ծախսվում ե 7 և կես միլ. ոռոբ.: Ղոերի վոռոգման շնորհիվ մեր առաջ լայն հնարավորություն ե բացվում Քանաքեռում կառուցելու հիգրոկայան 15 հազ. կիլ. մեծությամբ: Հընգամյա ծրագրում նախատեսված ե կառուցել այդ կալորանը: Անդրագետպանն ալդ կայարանի կառուցման ավարտումը փոխադրել եր յերկրորդ հնգամյակի առաջին տարին: Սակայն Միության Պետպլանը, մեր ծրագիրը հաստատելիս, յեներով այն տեսակետից, վոր գոյություն ունեցող եներգիան չի բավարարի ժողովրդական տնտեսության զարգացման գործին, վորոցել եր կառուցել Քանաքեռի հիգրոկայանը այն հաշվով, վոր նրա շահագործությն սկսվի 32/33 թ., հիմնական ծախսման չափը սահմանված ե 8 և կես միլ. ոռոբ.: Բացի այդ յերկու շրջանային կայաններից 35 կիլ.-ժ. կարողությամբ և 16 միլ. ոռոբ. ծախսով լայնացվելու յեն նաև Յերևանի^{*)} և Լենինականի կայանները, ծախսելով նրանց վրա 2573 հ. ոռոբի, նրանց կարողությունը հասցնելով 9,700 կիլ.: Իջևանի հիգրոկայանի աշխատանքները վերջացնելու համար, վոր ունի 550 ուժ (իսկ առաջին շրջանում՝ 350 ուժ) մենք նախատեսում ենք ծախսել 750 հ. ոռոբ.: Պղնձի արտադրությունը Ղափանում լայնացնելու համար անհրաժեշտություն ե առաջ գալիս սկսել Ղափանում 3 հազ. կիլ. մեծությամբ հիգրոկայանի կառուցման գործը 1 միլ. ոռոբի ծախսով հնգամյակում: Մեր ար-

^{*)} Յերևանի կայանի աշխատանքներն արդեն վերջացած են:

դյունաբերության և մեծ հիղըոկալաններով տերրիտորիալ տարածումը և բոլոր կայարաններին հավասարաչափ ծանրաբեռնման, ինչպես նաև արդյունաբերության բոլոր ճյուղերին անընդմիջում ելեկտրոներգիա մատակարարելու նպատակով հարց և առաջադրվում անցնող հնգամյակում սկսել բոլոր կայարանների լարագին միացումը (ԿՍՏՈՎԱԿԵԱ, Լենինական, Քանաքեռ, Յերևան, վորի համար հընդամշակի հաշվին նախատեսված և ծախսել Յ միլիոն ռուբլի:

Մեր առաջ դրված հիմնական նպատակը՝ մեքենայացման, ինդուստրիացման ինթերէկելու զյուղատնտեսությունը—հարց և բարձրացնում՝ մոտեցնել հներգիան սպառող-զյուղացուն գյուղում, Այդ նպատակով հնգամյակով նախատեսված կառուցել և վերջացնել Գորիսի և Դիլիջանի կայանները, ինչպես նաև սկսել և ավարտել զյուղական կայաններ Մեղրիում, Քեշիշքենդում, Ախտալում, Բարանալում և Կրասնոսելսկում 1235 կիլ. ունակությամբ, 1255 հ. ո. ծաքիսով: Բացի վերօնիշավալ կայաններից չորս խոշոր կայաններ (Զորագիս, Յերևան, Լենինական, Քանաքեռ) միացնելու դիմքում հնարավորություն և ստեղծվում այն զյուղական վայրերում, վորտեղ անցնում են ելեկտրական թերթ, կառուցել փոքրիկ արանսֆորմատորներ *) և զյուղացիներին մատակարարել ելեկտրոններգիա թե զյուղանախառնության համար և թե կենցաղային կարիքների համար: Այս բոլոր միջոցների արդյունքն այն կլինի, վոր մենք հնգամյակի վերջում բոլոր ելեկտրո-

կայանները միասին վերցրած 1927/28 թվին 3186 հ. կիլ. և 1.100 հ. ո. արտադրանքի արժեքից կհասնենք 32/33 թ. կլոր թվով 48 և կես հ. կիլ., իսկ ծախսքի գումարը կկազմի 25 միլ. ռուբլի:

Խուն արտադրանքը 32/33 թ. կկազմի 7600 հազ. ռուբ: Անհրաժեշտ և նշել, վոր մեր ելեկտրոններգիայի ինքնարժեքն ուրիշ կայանների ենհրգիայի ինքնարժեքից համեմատաբար պակաս ե:

28/29 թ. Յերևանի հիդրոկայանի եներգիայի կլոր արժեք 2,5 կոպ., իսկ 32/33 թ. կլինի 1,8 կ., լենինականինը 32/33 թ.՝ 1,8 կիլ., Զորագիսինը՝ 1,8 կոպ.: Կանոնական կայանում մենք կունենանք թանգ արժեքը՝ 14 կոպ.: Ելեկտրիֆիկացիայի այս ծրագիրը հանդիսանում ե մեր հիմնական վարիանտը, վորն անպատճան պետք ե իրագործվի կյանքում:

Սակայն այնքան, վորքան չամեկ(թ)Կ 16-րդ կոնֆերենցիան և խորհուրդների 5-րդ համագումարն ընդունել են առաջինի փոխարեն ոպտիմալ վարիանտ, դրա հետևանքով մեր ժողովնախորհը մշակել ե ելեկտրիֆիկացիայի նոր պլան: Այդ վարիանտի համաձայն բոլոր կայանների ուժը 32/33 թ. պետք ե լինի 57000 կիլովատ և ընդհանուր ծախսման չափը՝ 38 միլ. ռուբ.:

Արդյունաբերական ճյուղերի վերանայման խընդիրների հետ կապված, զինավորակես քիմիական, վորի համար նախատեսվում ե արտադրանքը բարձրացնել, ելեկտրոններգիայի պահանջը, 32/33 թ. հիմնական վարիանտի 100 միլ. կիլ.-ժամի հակառակ, ուղարիմական վարիանտով լինելու լի 178 միլ. կիլ.-ժամ: Յեթե միջին ավելի լուսաբանելու լինենք և դժանք այն խոշոր նշանակությունը, վոր ունի ելեկտրիֆիկացիան չնենչ ծամյա պլանը՝ 2.

*) Ելեկտրոններգիա ընդունիչ և բաժին:

յերկրի արդյունաբերության ու կուլտուրական վերելքի համար, ապա ինքնըստինքրան պարզ և հասկանալի կլինի, վոր ելեկտրիֆիկացիայի հնգամյա հեռանկարային պլանի համաձայն մենք չտեսնված քայլեր ենք անելու յերկրի ինդուստրիացման և կուլտուրական հեղափոխության ճակատում։ Վոչ միայն արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, քաղաքները պետք ե սփովեն ելեկտրական լուսով, այլ նաև այնտեղ, ուր մինչև հիմա ելեկտրական լույսն աներևակայելի բաղձանք ու յերազ ե թվացել, մեր հնգամյա պլանը յերազն իրականության ե վերածելու, նա կլինի գյուղական խրճիթների մարիսի լույսն ելեկտրականության փոխող առաջին հնգամյակը։

**ՀԻՄՆԱԿԸՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԳՅՈՒՆԱԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ
ԵԼԵԿՏՐԻՖԻԿՈՒՑԻ ՄԵջ**

Ընդհանուր ներդրումները կորացրած գումարով կազմում են 110 միլիոն ռուբլի, վորը բաժանվում է հետևյալ ձևով։

Ա. Միուրենական	28,820	հ.	ռ.
վորից 1. Պղնձի արդյունաբերություն	20,300	»	»
2. Արթիկի տուֆ	8,520	»	»
Բ. Հանրապետական արդյունաբերություն	54,130	»	»
Գ. Տնայնագործական արդյունաբերություն	1,155,800	»	»

Դ. Տեղական արդյունաբերություն 1,700 » »
Ե. Ելեկտրիֆիկացիա 25,000 » »

Հիմնական ներդրումների ընդհանուր ծավալից, առանց ելեկտրոշինարարության, 85 միլ. ռուբ. գումարից 49,8 միլ. ռուբլի, կամ 57,6 տոկ. գնում և «Ա» խմբին (ծանր ինդուստրիալին), իսկ մնացած գումարն, այսինքն 36 միլ. ռուբ.՝ «Բ» խմբին (թեթև ինդուստրիա)։

Ինչպես տեսնում ենք վերոհիշյալ թվերից, հինգ տարվա ընթացքում **110 միլ.** հիմնական ներդրում պետք ե կատարենք, վորն անպայման պահանջում ե մաքսիմում աշխատանք՝ նախատեսված պլանն իրագործելու համար։

**ԱՐԳՅՈՒՆԱԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԵԼԵԿՏՐԻՖԻԿՈՒՑԻԱՅԻ
ԱՄՐՈՂԸ ԱՐՏԵՇԻ ԱՐՏԵՇԻ**

Զնայած վոր յուրաքանչյուր բաժնում ցուց տվինք ամբողջ արտադրանքի արժեքը, սակայն այդ տորությունը մի հայտարարի բերելու համար նպատակարմար ե առանձին կանգ առնել այդ խնդրի վրա և տալ լուսաբանված պատկերը, ընդհանուր արդյունաբերության գլխավոր ճյուղերի ամբողջ արտադրանքի բերության գլխավոր ճյուղերի ամբողջ արտադրանքի արժեքը (26—27 թ. անփոփոխ գներով, միլիոն ռուբ.)։

	Բացարձակ միլիոն ռուբ.		Տոկոսայ. տնումը 27-28 թ. և 32-33 թ.	Բնդիանուբ %	
	27-28	32-33		27-28	32-33
Ա. Ցենզային					
Գղճահարցքային . . .	2,2	8,7	391,6	5,8	5,6
Ելեկտր. եներգ. արտադր.	1,1	7,6	691,0	2,9	4,9
Մանկածագործ	2,3	48,9	2126,1	6,0	31,4
Հինու-կռնյակ	2,6	5,6	215,4	6,8	3,6
Բամբակագործ	3,9	13,3	340,0	10,2	8,5
Քմիելական	1,2	7,8	625,0	3,1	4,8
Շինարարական	1,5	7,6	506,7	3,9	4,9
Ալլք	7,7	25,0	162,3	20,2	16,0
Հայտաժենու «Ա» խմբակ	22,5	124,2	552,0	58,9	79,7
Այդ թվում					
Հիութենական	2,2	8,7	391,6	5,8	5,6
Յերկային	5,7	18,8	329,8	14,9	12,1
Անրապետական	9,1	82,1	902,2	23,8	52,7
Հեղական	1,5	5,8	393,5	3,9	3,7
Բ. Տնայնագործ . . .					
Այդ թվում	15,7	31,6	201,2	41,1	20,7
Լրտ. տնայնագործ կոոպ.	2,3	14,9	645,8	6,0	9,6
Այլ համայնացված . . .	1,3	4,0	316,2	3,4	2,6

<i>Բալոր աբու. ցեղակալն և վոչ թենդային . .</i>	88,2	155,8	407,8	100	100
<i>Այդ թվում Արտադր. միջոցներ . . .</i>	14,6	58,1	397,9	38,2	37,3
<i>Սպառողական միջոցներ</i>	23,6	97,7	412,2	61,8	62,7

Այստեղ չի մտնում Արթիկի տուփը, տեղեկությունները չունենալու պատճառով։

Ի՞նչ ե ասում թվերի լեզուն; Նրանք պարզ և
վորոշակի ցույց են տալիս կուսակցության և խորհրդ-
գային իշխանության վարած քաղաքականությունը
և բրյուջի ինդուստրիացման համար։ Հնդանակի ընթաց-
քում մենք ունենք արդյունաբերության բոլոր արտա-
դրանքի աճում՝ 300 տոկոս, իսկ ցենզային արդյունա-
բերության աճումը՝ հասնում է 452 տոկոսի, ըստ
վորում գրեթե միատեսակ աճում ունենք արտադրա-
կան միջոցների խմբի՝ 297 տոկոսով և սպառողական
միջոցների խմբի՝ 312,2 %։

Ավելի մեծ չափով հաստատելու համար, վօր մենք անշեղ քոյլերով գնում ենք իրերի ինդուստրիաց- ման ձանապահով, բավական և բերել արդյունաբե- րության տեսակաբար կշռի պատկերը։ Ընդհանուր արտադրության ամբողջ արտադրանքը 1927/1928 թ. (1926/1927 թ. գներով) կազմում եր 119,7 միլ., գյու- ղատնտեսության արտադրությունը (միջին բերքի պայմաններում) կազմում եր 81,500 հ. ոուր. կամ ամբողջ արտադրության 68,1 տոկոսը, իսկ արդյունա-

բերության արտադրությունը՝ 38,2 միլ. ռ., կամ 31,9 տոկոս:

1932/33 թ. ամբողջ արտադրության արժեքը կկազմի 313,4 միլ. ռ., կամ թե չե կանի 161 տոկոսով, ըստ վորուժ գյուղատնտեսության արտադրությունը կհաշվի 157,6 միլ. ռ. (աճում 93,4 տոկոս), կամ 50,3 տոկոսը ամբողջ արտադրության, իսկ արդյունաբերությունը դարձաւ նույն ժամանակ կհասնի 155,8 միլիոն ռ. (աճում 307,8 տոկոս) կամ ամբողջ արտադրության 49,7 տոկոսը: Այս թվերը պարզ ցուց են տալիս, վորմեր հնգամյակի վերջում արդյունաբերության արտադրության արժեքը հավասարվում է գյուղատնտեսության արժեքին:

Վերոհիշյալ թվերից պետք են անվերապահորեն ցեղակացություն հանել, վորմեր յերկիրն ազրարարին-արդյունաբերականից դառնում են արդյունաբերական-ագրարային յերկիր:

ՎՈՐԱԿԵՑԻՆ ՑՈՒՑԱՆՈՒՅՆԵՐ

Սակայն խոշոր սխալ կլիներ, յեթե մենք բավարարվելինք քանակային ցուցանիշներով:

Վորակալին ցուցանիշների հարցն իր ամբողջ հասակով կանգնած են մեր առաջ:

Ֆարբիկա-գործարանային ինքնարժեքը, բաց թողնանան գների իջնցումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը,—ահա այն հարցերը, վորոնք կազմում են վորակալին ցուցանիշների հիմքը: Կատարել արդպիսի պլան, ինչպիսին 110 միլ. ռ. իրական ներդրումն են, անկասկած, պետք են հիմնվել արդյունաբերության ներքին սոցիալիստական կուտակման անհրաժեշտության վրա, իսկ վերջինս հենքում

ե ֆարբիկա-գործարանային ինքնարժեքի իջնցման և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու վրա:

Արդյունաբերության ներքին սոցիալիստական կուտակման մասին ունենք մեր կուսակցության որդանների բաղմացու հանած վորոշումները:

Համ. Կ. (ը) Կուսակցության տառներկույերորդ համագումարի բանաձեռն արդյունաբերության մասին ասում ե.

«Հաղթական կարող ե լինել միայն այն արդյունաբերությունը, վոր տալիս ե ավելի շատ, քանց կլանում ե: Այն արդյունաբերությունը, վոր ապրում ե բարձեցի, այսինքն գլուզատընտեսության հաշվին, չի կարող ստեղծել պրոլետարիատի զիկտատուրայի համար կայուն և հարատե հենարան, պետական արդյունաբերության մեջ հավելված արժեք ստեղծելու խնդիրը խորհրդական իշխանության բախտի, այսինքն պրոլետարիատի բախտի ինդիքըն ե*):

Ինչպես հայտնի յե, հիմնական դիրեկտիվը հեռանկարակին պլանը կազմելու համար կարանում նրանում, վոր հինգ տարվա ընթացքում ինքնարժեքն իջեցվի 30—32 տոկոսով: Ժողովրդական տնտեսության հնգամյա պլանի վերաբերյալ Համ. Կ(ը)Կ տասնվեցերորդ կոնֆերենցիայի բանաձեռնացուց ե անում ինքնարժեքի 35 տոկոսն իջեցնելու անհրաժեշտությունը:

*) Տես Համ Կ բ կիրեկտիվերը մնաեսական քաղաքականության առաջարիգությունը 10 տարվա ընթացքում 1917—1927 թ. Մ. Սավալյան, եջ 184:

Խորհրդավին Հայաստանի Ժողովրդական Տնտեսության Խորհրդի կողմից ընդունված ուղղութերի համաձայն, արդյունաբերության ստուգիչ թվերի յերկրորդ վարիանտի հիման վրա ինքնարժեքի իջեցումը «Ա» խմբում կատարվելու յի 44,7 տոկոս, իսկ «Բ» խմբում՝ 22 տոկ., իսկ բոլորը 26,2 տոկոս: Այստեղից յիշեռում ե, վոր «Ա» խմբի նկատմամբ մենք կատարում ենք դիրեկտիվը, իսկ «Բ»-ի նկատմամբ կատարելուց հետո յենք, իսկ ընդհանուր գումարը ցույց է տալիս, վոր Փաբրիկա-գործարանային ինքնարժեքի իջեցման մասին դիրեկտիվը չի կատարվում: Այս հանգամանքն ստիպում է վերանայել բոլոր այն ելեմենտները, փորոնք ազդում են ինքնարժեքի վրա, նպատակ դնելով ել ավելի իջեցնելու ինքնարժեքը, հարմարեցնելով այդ դիրեկտիվին: Ինչ վերաբերում է Հայպղնձին, անհրաժեշտ ե նկատել, վոր դիրեկտիվը միանգամայն լրիվ կիրապվ կիրառվում ե, ստուգիչ թվերում ինքնարժեքն իջնում ե 37 տոկոս: Բաց թողնվող գինը «Ա» խմբում նախաճրագրված ե իջեցնել 41,1 տոկոս, իսկ «Բ» խմբում՝ 21,4 տոկոս, իսկ բոլորը միասին 24,8 տոկոս: Այստեղ անհրաժեշտ ե նկատել, վոր այս բնագավառում կատարվում ե դիրեկտիվը՝ բաց թողնվելիք ապրանքների գինն իջեցնելու գործում:

Աշխատանքի արտադրողականության դիրեկտիվը մատնանշում եր բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը արդյունաբերության մեջ 95 տոկոս: Համ կ(բ)կ 16-րդ կոնֆերենցիայի բանաձեռնում մատնանշված ե աշխատանքի արտադրողականությունը 110 տոկոսով բարձրացնելու անհրաժեշ-

տությունը: Մեր ստուգիչ թվերում հետեւալ պատկերն ունենք, «Ա» խմբում՝ 120,2 տոկոս, իսկ «Բ» խմբում՝ 172,2 տոկոս, բոլորը 131,2 տոկոս: Հայպղնձում աշխատանքի արտադրողականությունը բարձրացվելու յի 95 տոկոսով:

Այս տվյալները ցույց են տալիս, վոր աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու ինքրում դիրեկտիվը ամբողջապես կիրառված ե արդյունաբերության ստուգիչ թվերում:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՌԵՖ ՅԵՎ ԸՆԴԾԱՑՎԱԾՔ

Արդյունաբերական բանվորների ընդհանուր թիվը 1927—28 թ. 4,900-ից հասնում է 32—33 թ. 11,700-ի, ըստ վորում Հայպղնձի բանվորների թիվը 2,800 հոգուց դառնում է 3300, Ժողոտնագերխորհի արդյունաբերության մեջ 2,100 հոգուց աճում է 8,400 հոգու: Պետք ե նկատել, վոր ամենաշատ աճումը կատարվում է մանավագրուժվածքային արդյունաբերության մեջ (1200 հոգուց աճում է մինչև 5800 հոգու):

Աշխատավարձի բնագավառում մեր առաջ հետեւալ կանոնին ե դրված:

Աշխատավարձն առաջին հերթին պետք ե բարձրացնել յետ մնացող արտադրության ճյուղերում, իսկ արդյունաբերության մեջ՝ յետ մնացած խմբերում, այս մեր հիմնական խնդիրը:

Միջին հաշվով «Ա» խմբում բարձրանալու յի 26,1 տոկոս, բայց այդ խմբում աճումը տատանվում է 18—57 տոկոսի մեջ:

Հայպղնձի կողմից նախատեսված ե աշխատավարձը բարձրացնել 42 տոկոսով:

«Բ» խմբում աճումը հասնում է 37,6 տոկոսի. ալստեղ ևս, ինչպես «Ա» խմբում, աշխատավարձը տատանվում է 20-58 տոկոսի մեջ:

Փողանտիսորհի արդյունաբերության մեջ աշխատավարձի միջին տճումը հավասար է 33,3 տոկոս, իսկ Հայպղնձի հետ միասին՝ 39,3 տոկոս, վորը հիմնականում համապատասխանում եր այդ ժամանակի գոյություն ունեցող աշխատավարձը բարձրացնելու մասին յեղած գիրեկտիվին։ Սակայն 16-րդ կոնֆերենցիայի վորոշման համաձայն, իրական (ռեալ) աշխատավարձը պետք է բարձրացվի 72 տոկոսով, իսկ մեր պլանում նախատեսված է միայն նոմինալ աշխատավարձը։ Վերջին գիրեկտիվի համաձայն իրական աշխատավարձի հարցը քննության պետք է լենթարկվի նրա չափը բարձրացնելու նպատակով։

ԵՇԽՑԱԿԻ ՊԵՏՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Միութենական կառավարության այն վորոշումը, վոր այս հնգամյակի ընթացքում արտադրության բոլոր ճյուղերում պետք է անցկացվի յոթժամյա բանկորական որ, սեր ծրագրում կիրառված և ամբողջապես։

Յոթժամյա բանկորական որվա անցնելու համար կառավարության հատուկ կոմիսիայի կողմից հետևել կարգն և սահմանված։

28/29 թվին արդյունաբերական ըանվորների ընդհանուր թվից 14,1 տոկոս, 30-31 թ., 56,8 տոկ., 31/32 թ., 67,4 տոկոս, և վերջապես 32/33 թ., այսինքն հնդամբակի վերջում՝ 100 տոկոս։ Պարզ է, վոր այս

բաժանումը հանդիսանում է միայն նախնական։ Այս հարցը դեռ հետագայում լենթակա է լուրջ քննության և պետք է հաստատվի Անդրկովկաստան և Միութենական մարմինների կողմից։

Իսկ մինչև փաստորեն կիրառումը հենց իրենք գործարանները, ձեռնարկությունները հիմնովին պետք են քննեն, նախապատրաստեն բոլոր այն հարցերը, վորոնք կապված են յոթժամյա բանկորական որվա անցնելու հետ, վորպեսզի չկանգնենք այնպիսի սիմառների առաջ, վոր կատարվել և նորհրպային Միության այս կամ այն ձեռնարկություններում։ Պըոփմիությունները ևս պետք է զբաղվեն այդ հարցի մանրամասն քննությամբ, վորպեսզի աղատվող ժամը ուղիղության ձևով ոգտագործեն բանկորների քաղաքական, կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար։

Պլանում հատուկ գումար և նախատեսված (783 հազ. ռ.) աշխատանքի անվտանգության և արդյունաբերության սանիտարիակի միջոցներ ձեռնարկելու համար։ Այդ գումարում 443 հազ. ռ. Հայպղնձի գծով և մտցված, իսկ մնացած 339900 ռ.՝ Փողանտիսորհի ձեռնարկությունների։

Վերոհիշյալ նպատակի համար սահմանված գումարի փոքր չափը պետք է բացատրել այն հանգամանքով, վոր գոյություն ունեցող կարգի համաձայն բոլոր նոր ձեռնարկություններում նախքան աշխատանքներն սկսելը պետք է մտցնել անհրաժեշտ տեխնիկական կարգավորում, Աշխատողկոմատի պահանջի համաձայն։ Վերջինիս ծախսը մտնում է հիմնական ներդրումների ընդհանուր արժեքի մեջ։

Բանվորների բնակարանային հարցը սերտ կերպով կապված է արդյունաբերության պլանի հետ Յեթև վողջ ԽՍՀՄ-ում բնակարանալին հարցը հանդիսանում է ամենացագույն ու կիսական հարցերից մեկը, ապա մեզ մոտ ավելի ես: Վորովհետեւ այն ժամանակ, յերբ ամենուրեք քաղաքներում միջին հաշվով շնչին 5—5½ քառ. մետր ե, մեզ մոտ քաղաքներում այդ նորման իջնում է 2,51 քառ. մետրի: Հնդկամակի ընթացքում բնակարանային շինարարության վրա ծախսվելու յի 40 միլիոն ռուբլի, վարից 38 միլիոն ռուբլին համայնացրած սեկտորի գծով:

Ինկատի ունենալով ազգաբնակության աճումը և
բնակչութիւնի բնական նվազեցումը և մաշվելը՝ հնդա-
մակի վերջում մեկ շնչին նորմայով կամանի 3,17 քա.
մետր:

Իսկ յեթե լուրաքանչյուր արդյունաբերական
բանվորի ընտանիք հաշվելու լինենք յերկու և կես
հոգի, 1927—28 թ. մեկ շնչի ապրելու տարածության
միջին նորման հավասար կլինի 3,1 քառակուսի մետրի:
Արդյունաբերության լինթակա բնակարաններում 5
տարվա ընթացքում արդյունաբերության բնակարա-
նային շնարարության համար ծախսվելու յե 12 և կես
միլիոն ռուբլի: Հնգամյակի վերջում նորման կբար-
ձրանա 4,4 քառ. մետրի:

Պարզ է, վոր այս նորման շատ քիչ է, ուստի և
անհրաժեշտ է բոլոր միջոցները ձեռք առնել՝ լավաց-
նելու համար բանվորների բնտկարանալին պայման-
ները:

Ար են, ընդհանուր տամալը, հիմնական մոնենա-
ները, արդյունաբերության հեռանկարանային զարգաց-

ման վերստուգիչ թվերը: Պարզ է, վոր այս պլանի
իրագործումը մեղ հեշտությամբ չի հաջողվի: Մեր
առաջ կծանրանան մի շարք դժվարություններ՝ ամ-
բողջ ժողովրդական տնտեսության ընդհանուր վեր-
ելքի հետ կապված: Այդ դժվարությունները պայմա-
նավորվում են մեր սոցիալիստական շինարարության
ընդհանուր դժվարություններով: Այնուամենայնիվ
այս ծրագիրը պետք է իրագործվի խորհրդավոր իշխա-
նության կողմից քաղաքի լայն բանվորական մաս-
սայի, զուղի չքավոր ու միջակ մասսայի լիակատար
ոգնությամբ ու ոժանդակությամբ: Մասսաների սո-
ցիալիստական մրցման մեծ գործի նշանաբանի տակ,
զանակարգավոր պայքարում ամրապնդված բայց կե-
կան կուսակցության հմուտ զեկավարությամբ մենք
կիրագործենք մեր հնգամյա պլանը, կատարելով նորա-
նոր նվաճումներ արդյունաբերության սոցիալիստա-
կան զարգացման գործում:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եզ

Արտադրական միջոցների արտադրություն (Խումբ «Ա»)	5
Սպառման միջոցների արտադրություն (Խումբ «Բ»)	18
Տեղական արդյունաբերություն	24
Տնաբնագործական արդյունաբերություն	25
Ելեկտրիֆիկացիա	27
Հիմնական ներդրություններ արդյունաբերության և ելեկտրիֆիկացիայի սեղ	34
Արդյունաբերության և ելեկտրիֆիկացիայի խառն արտադրանքը	35
Վորակալին ցուցանիշներ	38
Բանվորական ուժ և աշխատավարձ	41
Աշխատանքի պաշտպանություն	42

ՀՀ Ազգային գրադարան



NL0206059

(У.) 1 $\frac{1}{2}$ д.



ԳԻՒԸ 10 Կ.

Х. ОСЕПЯН

5-летний план нар. хозяйства ССР Армении

Промышленность и электрификация
